ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանը 2021 թվականի, օգոստոսի 26-ին, հայտարարում է բաց դասական աճուրդ վաճառք համայնքային սեփականություն անշարժ գույքի, հետևյալ լոտով՝

Լոտ 1: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Օձուն գյուղի կադաստրային քարտեզի **06-112-0084-0049** ծածկագրով, **բնակավայրերի** նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, **0.47587** հեկտար մակերեսով հողամասը և հողամասում առկա 210.5 քառակուսի մետր անասնաբուժարանը, 21.96 քառակուսի մետր մակերեսով կիսակառույց շինությունը և 24.48 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ հասարակական նշանակության գործունեություն իրականացնելու նպատակով:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել **4650000 (չորս միլիոն վեց հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

Անշարժ գույքը ունի համապատասխան կոմունալ հնարավորություններ, մոտեցում ընդհանուր օգտագործման ճանապարհից:

Աճուրդ վաճառքը տեղի կունենա 2021 թվականի, օգոստոսի 26-ին, ժամը 11:00-ին, Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ փողոց 6 շենք 10, առաջին հարկ, թիվ 2 սենյակում:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի օգոստոսի 23-ը:
Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայանալ Օձունի համայնքապետարան՝ անձը հաստատող փաստաթղթով:
Լոտերի ուսումնասիրության և կանոնակարգին ծանոթանալու համար ներկայանալ Օձունի համայնքապետարան կամ զանգահարել +37477707038 կամ +37477566724 հեռախոսահամարներով: